



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԲԱՂԱԴՐԻՉ Ա - ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Երկիր Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու Ասիական Ջարգացման Բանկ/
 Հայքրմուդկոյուդի ՓԲԸ
Համագործակցող ՀԳՇՆ ՍՊԸ
Ժամկետ Ապրիլ 2008թ. – Մեպտեմբեր 2012թ.

Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիր

Ծրագրի նպատակն է բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում: Ծրագրում ընդգրկված Հայաստանի 10 մարզերի 251 բնակավայրերի համար կատարվել են նախնական ուսումնասիրություններ և տեխնիկատնտեսական հիմնավորումներ, սոցիալական, գենդերային և բնապահպանական ուսումնասիրություններ և վերլուծություններ, մշակվել են նախնական նախագծեր, բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլաններ, աշխատանքային նախագծեր:



Կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- դաշտային գործիքային ուսումնասիրություններ,
- սոցիալական, գենդերային, բնապահպանական ուսումնասիրություն և վերլուծություն, ՇՄԿ և մոնիտորինգի պլանների կազմում,
- բնակավայրերի ջրամատակարարման սխեմաների վերհանում, գոյություն ունեցող խողովակաշարերի (մայր ջրատարների և ջրամատակարարման ցանցի) գույքագրում, քարտեզագրում,
- ջրապահանջի և ՕԿՋ-ների ծավալների հաշվարկ,
- բաշխիչ ցանցի հիդրավիկ մոդելավորում Epanet համակարգչային ծրագրով,
- ջրամատակարարման ցանցի սխեմայի մշակում, գոտիավորման հիմնավորում,
- տեխնոլոգիական հանգույցների (ելքի և ճնշման կարգավորման, ջրաչափական հանգույցներ, մասնավոր տների միացումներ, տարբեր տիպի միացումներ) մշակում,
- բարելավմանն ուղղված միջոցառումների գնահատում և ըստ առաջնահերթության միջոցառումների դասակարգում,
- ֆինանսական վերլուծություն,
- աշխատանքային նախագծերի մշակում, ներառյալ աշխատանքային գծագրերը, տեխնիկական մասնագրերը, աշխատանքային ծավալները, գնումների փաթեթը և նախահաշիվները,
- շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն:



Ծրագրի նպատակը

Բարելավել ծրագրում ընդգրկված բնակավայրերի ջրամատակարարումը՝ ապահովելով բաժանորդների կողմից սպառվող ջրի հաշվառումը, ջրամատակարարման տևողության ավելացումը, բաշխիչ ցանցի հիդրավիկական արդյունավետ ռեժիմները, կրճատելով բաշխիչ ցանցում առկա հոսակորուստների մակարդակը: